**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**1899 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 1899 թվականի հուլիսի 29-ին:

Մշտական արբիտրաժային դատարանը հիմնադրվել է 1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին ընդունված Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին կոնվենցիաների հիման վրա՝ որոնք ապահովում են Դատարանի գոյության և գործունեության իրավական հիմքը: Դատարանի անդամ երկրներ չեն հանդիսանում աֆրիկյան պետությունների մեծ մասը, Կենտրոնական Ասիայի երկրները (բացառությամբ Ղրղզստանի), Եմենը, Մյանմարը, Հյուսիսային Կորեան, Աֆղանստանը, Ադրբեջանը և այլն:

Դատարանի մատուցած ծառայությունները չեն սահմանափակվում վեճերի արբիտրաժային կարգավորմամբ, այլև կարող են ներառել փաստահավաք առաքելություններ, անդամ երկրներին ցուցաբերվող վարչական աջակցություն, վեճերի դեպքում միջնորդություն, փաստաթղթաշրջանառության և արխիվացման ծառայություններ և այլն: Այն նաև տրամադրում է իր տարածքը և ծառայություններն այլ արբիտրաժային կառույցների շրջանակներում վեճերի կարգավորման գործընթացների իրականացման համար:

Դատարանին Հայաստանի Հանրապետության անդամակցումը կարևորվում է միջազգային հեղինակության բարձրացման տեսանկյունից: Անդամակցումը կարևորվում է նաև Հայաստանի՝ տնտեսական զարգացման և ներդրումային գրավչության բարձրացման համատեքստում՝ հնարավոր ներդրողներին տալով լրացուցիչ իրավական երաշխիքներ:

Մշտական արբիտրաժային դատարանը զբաղվում է նաև բնապահպանական վեճերի կարգավորմամբ, ինչպես նաև ցուցաբերում է վարչական աջակցություն Էներգետիկ խարտիայի շրջանակներում, կամ UNCITRAL-ի արբիտրաժային կանոնների ներքո իրականացվող վեճերի կարգավորման գործընթացներին: Այս համատեքստում էլ ավելի է կարևորվում Դատարանին ՀՀ անդամակցումը՝ հաշվի առնելով Էներգետիկ խարտիայի շրջանակներում Հայաստանի նախաձեռնված գործընթացը, ինչպես նաև Հայաստանի դեմ բնապահպանական, տնտեսական և այլ բնույթի վեճերի նախաձեռնման բարձր հավանականությունը:

Մշտական արբիտրաժային դատարանին անդամ է 124 պետություն, որոնք

միացել են Մշտական արբիտրաժային դատարանի հիմնադիր կոնվենցիաներից (1899 և 1907 թվականներին ընդունված Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին կոնվենցիաներ) մեկին կամ երկուսին:

Կոնվենցիային անդամ է 72 պետություն (ցանկը կից ներկայացվում է):

Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1900 թվականի սեպտեմբերի 4-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 1899 թվականի հուլիսի 29-ին ընդունված Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին կոնվենցիայի վավերացումը կամ հաստատումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

**ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ**

17.10.2024

X 

ՊԱՐՈՒՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN PARUYR 1512730076

**ՊԱՐՈՒՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**ՑԱՆԿ**

**1899 թվականի հուլիսի 29-ին ընդունված Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին կոնվենցիայի մասնակից պետությունների վերաբերյալ**

| Պետություն | Միացել է |
|---|---|
| 1. Արգենտինա | 15.06.1907 |
| 2. Ավստրալիա | 01.04.1960 |
| 3. Ավստրիա | 12.11.1918 |
| 4. Բելառուս | 04.06.1962 |
| 5. Բելգիա | 04.09.1900 |
| 6. Բոլիվիա | 15.06.1907 |
| 7. Բրազիլիա | 15.06.1907 |
| 8. Բուլղարիա | 04.09.1900 |
| 9. Բուրկինա Ֆասո | 30.08.1961 |
| 10. Կամբոջա | 07.01.1956 |
| 11. Կամերուն | 01.08.1961 |
| 12. Կանադա | 19.08.1960 |
| 13. Չիլի | 15.06.1907 |
| 14. Չինաստան | 21.11.1904 |
| 15. Կոլումբիա | 15.06.1907 |
| 16. Կոնգո | 25.03.1961 |
| 17. Խորվաթիա | 07.10.1998 |
| 18. Կուբա | 15.06.1907 |
| 19. Դանիա | 04.09.1900 |
| 20. Դոմինիկյան Հանրապետություն | 15.06.1907 |
| 21. Էկվադոր | 03.07.1907 |

| | |
|---|---|
| 22. Էլ Սալվադոր | 20.06.1907 |
| 23. Եթովպիա | 30.07.2003 |
| 24. Ֆիջի | 02.04.1973 |
| 25. Ֆրանսիա | 04.09.1900 |
| 26. Գերմանիա | 04.09.1900 |
| 27. Հունաստան | 04.04.1901 |
| 28. Գվատեմալա | 15.06.1907 |
| 29. Հաիթի | 15.06.1907 |
| 30. Հոնդուրաս | 01.12.1961 |
| 31. Հունգարիա | 16.11.1918 |
| 32. Իսլանդիա | 08.12.1955 |
| 33. Հնդկաստան | 29.07.1950 |
| 34. Իրան | 04.09.1900 |
| 35. Իրաք | 31.08.1970 |
| 36. Իտալիա | 04.09.1900 |
| 37. Ճապոնիա | 06.10.1900 |
| 38. Ղրղզստան | 04.06.1992 |
| 39. Լաոսի Ժողովրդաժողովրդավարական Հանրապետություն | 18.07.1955 |
| 40. Լիբանան | 14.02.1968 |
| 41. Լյուքսեմբուրգ | 12.07.1901 |
| 42. Մավրիկիոս | 03.08.1970 |
| 43. Մեքսիկա | 17.04.1901 |
| 44. Մոնտենեգրո | 01.03.2007 |
| 45. Նիդերլանդներ | 04.09.1900 |
| 46. Նոր Զելանդիա | 10.02.1959 |
| 47. Նիկարագուա | 15.06.1907 |
| 48. Հյուսիսային Մակեդոնիա | 19.12.2000 |
| 49. Նորվեգիա | 04.09.1900 |
| 50. Պակիստան | 05.08.1950 |
| 51. Պանամա | 15.06.1907 |
| 52. Պարագվայ | 15.06.1907 |
| 53. Պերու | 15.06.1907 |
| 54. Պորտուգալիա | 04.09.1900 |

| | | |
|---|---|---|
| 55. | Ռումինիա | 04.09.1900 |
| 56. | Ռուսաստանի Դաշնություն | 04.09.1900 |
| 57. | Սենեգալ | 01.08.1977 |
| 58. | Սերբիա | 05.06.2006 |
| 59. | Սլովենիա | 01.10.1996 |
| 60. | Իսպանիա | 04.09.1900 |
| 61. | Շրի Լանկա | 09.02.1955 |
| 62. | Շվեդիա | 04.09.1900 |
| 63. | Շվեյցարիա | 29.12.1900 |
| 64. | Թայլանդ | 04.09.1900 |
| 65. | Թուրքիա | 12.06.1907 |
| 66. | Ուկրաինա | 04.04.1962 |
| 67. | Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն | 04.09.1900 |
| 68. | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | 04.09.1900 |
| 69. | Ուրուգվայ | 17.06.1907 |
| 70. | Վենեսուելա | 15.06.1907 |
| 71. | Վիետնամ | 29.12.2011 |
| 72. | Զիմբաբվե | 19.09.1984 |